

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄԶԸ
Պաշտպանաց 10 ՄԶԸ
Վ. Կապուստայ Կ. Պոլսոյ 4 ՄԶԸ
Պաշտպանաց 3 ՄԶԸ
Բերանդանիք թերթի գին 60 փրկ
յանուցանան տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար գատ սահարկութիւն կը լըլայ:



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 28 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ և իտալիոյ կառավարու-
թեանց մէջ երկար ժամանակէ ի վեր
քար զայլ թակղութեան եղած խըն-
դիր մը վերջապէս յաճող լուծում
տանալով, երկու գրաւի և համա-
յեղ ազգաց մէջ տիրած զրտութեան
սրտածառը վերցաւ:

Գաղղիոյ կառավարութիւնը Ձի-
վիթա — Վէրայի նաւահանգիստին
մէջ շողեւում մը կը սրահէր Պալլին
տրամադրութեան ներքե: Այս բա-
նը՝ եթէ ոչ սպառնալիք գոնէ տե-
սակ մը բողբ էր իտալական կառա-
վարութեան հոսմը գրաւելուն գէմ,
և Պալլին ալ յուսոյ ապաւէն՝ իր կո-
րուսեալ աշխարհական իշխանութիւ-
նը վերստին ձեռք բերելու: Իսկ ի-
տալիոյ կառավարութեան և աղղին
յարատեւ գեղեցիկութեան պատճառ:

Մաք—Մահան մարաշախտին աշ-
խարհավարութիւնն, իր կղերական
միտումներով հանդերձ, հասկցաւ
վերջապէս որ Պալլին հաճոյ ըլլալու
համար իտալական աղղը գրգռել,
Գաղղիոյն ուժացնել և իրաւիոյ
գիրքը ձգել՝ խոհեմութեան դործ
չէր: Ուստի իրաւաբան հղաւ իտալիոյ
կառավարութեան հետ, և սրայէս
երկու գրաւի աղղաց հակակրու-
թեան պատճառը վերցաւ մէջ տեղէն:

Վիքթոր Լամանուէլ թաղաւորն
սյուսհետեւ կրնայ Գաղղիոյ նկատ-
մամբ ունեցած համակրութիւնն ա-
ւելի արատաւթեան յայտնել, ա-
ռանց իր ժողովրդաց զգացումը վի-
րաւորելու: Պալլն ալ կը համոզուի,
որ իր կորուսեալ աշխարհական իշ-
խանութիւնը վերստին ձեռք բերե-
լու երազին մէջ Գաղղիոյ վրայ յոյս
չկրնար դնել սյուսհետեւ:

Կըսուի թէ Գաղղիա Օրէնք շո-
գենաւն ետ կանչելով՝ ուրիշ շողե-
նում մը պիտի զրկէ Ձիվիթա-Վիքիա-
յի նաւահանգիստը, բայց ոչ թէ Պա-
լլը պաշտպանելու, այլ իտալական
կառավարութեան քով գանձող
դաղղիական դեռպանին տըրա-
մադրութեան ներքեւ դրուելու հա-
մար, որով ոչ միայն աւելի սրտիւ
մըրած կը լըլայ իտալիոյ կառավարու-
թեան, այլ և Վիքթոր Լամանուէլ
թաղաւորին Հոսմի վրայ ունեցած
վեհապետական իրաւունքը ճանչա-
կըլլայ ի գոհութիւն համայն իտա-
լացոյ:

Փարիզի նախորդ Գերմանական
գետական Արմի կոմիտէն անանկալ
բանտարկութիւնը մեծ զորմանք
պատճառեց քաղաքական աշխարհի:
Պ. Պիամարք՝ տարի մ'առաջ խոր-

հրդարանին մէջ Արմի կոմիտէն գէմ
ամբաստանութիւն ըրեր և հերքո-
ղական պատասխան առեր էր:

Հիմա՝ տարի մ'անցնելէն ետեւ՝
յանկարծ անոր տունը կոխել տալով
խուզարկել և զինքն ալ դատաւարու-
նի ենթարկելով բանտարկելը տարո-
ւրնակ կը թուի:

Եթէ, կըսեն Եւրոպական թեր-
թերէն շատեր, Արմի կոմիտէն գէմ
ձեռք առնուած խառութեան ճըշ-
մարիտ պատճառը պաշտօնական
թուղթեր գործելու և հրատարա-
կելն էր, ինչո՞ւ համար տարիէն
աւելի ժամանակ ձայն չհանուեցաւ,
և հիմա որ Արմի կոմիտէ Գերմանիոյ
երեսփոխանական ժողովոյն ընդգի-
մողի մասին դուռն կարգելու խօսք
կար, մէկէն ի մէկ այս խնդիրն ե-
րեւան հանուելով կը բանտարկուի
և ընտանեացը բոլոր անդամներուն
բնակարանները կը խուզարկին:

Պ. Պիամարքի հակառակորդներն
անշուշտ այս պարագայէն օգուտ քա-
ղելով՝ պիտի ամբաստանեն զինքը թէ
զօրաւոր ոտիսի մը անունն ու աղղե-
ցութիւնը կորուսելու համար այս վա-
տահաճաւիշ միջոցներուն գիմած է:

Կեդրոնական Ասիոյ մէջ նորէն շը-
վիթութիւնը ծագեցան, որոց առ-
ջեւ Ռուսիա և Անգլիա չեն կրնար
անգիլթ կենալ:

Թուրքաստանի ուստական նոր գա-
ւառին սահմանակից խօքանտի խո-
նութեան մէջ ապստամբութիւն մը
ծագած է, որ կրնայ հիմնական յե-
ղափոխութիւն մ'առաջ բերել երկ-
րին մէջ:

Խոսքը Ռուստիան իշխանութեանց
միջոցաւ Պոլսալայի Լամանուէլ օգնու-
թիւն խնդրեց՝ բայց Ռուսական Թուր-
քաստանի կառավարին յանձն չա-
ռաւ միջնորդել:

Եթէ խօքանտի ներկայ խանը որ
Լէնկիթիմուրի բուն տոհմէն է, գա-
հէն տապալի, Պոլսալայի խանն ա-
նոր յաճողեւու պահանջները պի-
տի ընէ: Բայց աւելի հաւանական է
որ Գաղղիոյ Եւրոպայ խանին անցնի,
որ թէ և ժառանգական կամ ցեղա-
կան իրաւունք մը չունի, բայց Ռու-
սիոյ հետ խաղաղութեամբ աղղերու
տրամադ իր է:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Բէշթա 7 հոկտ.
Բէշթայի Լոյս լրագիրը կը հաւատա-
թէ Աւստրո—Հունգարիոյ արտաքին գոր-
ծոց նախարարն իրաւունք տուեր է Բ-
Գրան, և միանգամայն խորհուրդ տուեր
է որ Թուրքիոյ և Աւստրիոյ մէջ հաստա-
ւեալ առևտրական դաշնագրութեան փո-
փոխութիւնը խնդրէ հիմա Զինեալ դաշ-
նագրութեան պայմանաւան 1890 ին
կը լրանայ:

ՊԱՅՄԱՆՔ

Գուրո գաղաժ լրագրաց՝ ձեռնու-
ծալը թմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն թմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լիս, Չինիլի խան, Մաթիւի գրասեն-
եակը:
Համար ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

Պայտն 8 հոկտ.

Տոն Բարրոս անձամբ իւր բանակին
գլուխն տնցաւ:

Մարտիլա 8 հոկտ.

Չրոհաւոր նաւախումբին երկրորդ
բաժնին ամեոյս 21 ին Երեւելը պիտի եր-
թայ:

Սթէնը 8 հոկտ.

Երկու Ամերիկեան Ֆրեդաթոնք Պիլէ-
ոն հաւան Գաղ ծովապետին հրամատա-
րութեամբ:

Լոնդոն 8 հոկտ.

Օտ. Բոն. 47 1/8
Իսի 1865—
» 1869 55 7/8
» 1871 68 1/2
» 1872 85 3/4
» 1873 53 7/16
Նոր փոխառութիւն 3 9/16
Անգլ. Բոն. 92 15/16
Լիվերքուլ 8 հոկտ.
Բամպակ Միտլինկ—Օրէն 8—3/8
» Ֆայր Տօլերա 5 1/4—3/8
Ծախուած 15000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքիս Ռուսական դե-
սան ինխաթիւլ զօրապետը չորեք-
շաբթի իրիկուն Կ. Պոլս հասաւ Լի-
վախայէն:

Լոնդոնայէն հեռագրով լուր կու-
տան թէ Օմ: Բոնսլիտէին նոր ար-
ժեթութեւրը Լոնդոնայի Պոլսային
մէջ ընդունուեր են:

Փոքր Ասիոյ ոսկեալ գաւառաց
օգնութիւն զրկելու պաշտօն ունեցող
կեդրոնական մասնաժողովը 260000
հօսայ արեւ զրկեց Լինկիւրի. 80000
հօսայ ալ Գարա—Հիսարէն գնաց:
Կեսարիոյ պէտք եղած ցորենը
չըլախայ գաւառներէն պիտի երթայ,
որոյ համար հարկ եղած հրամաննե-
րը զրկուած են:

Չանդըրի համար 100000 դրիւ
ցորեն պէտք ըլլալով՝ Գալթամազի
գաւառին տասանորդի տուրքերէն
գոյացած ցորենը հոն պիտի զրկուի:
Վերջապէս կառավարութիւնը 10000
դրդ եղն կը գնէ, որպէս զի իրենց
կենդանիները կորուսանող երկրա-
դործաց բաժնուին:

Վեցերորդ շրջանակի թաղապե-
տութիւնը Գարադեղի կամուրջին
մօտ չինուած խրճիթները վերցնել
տուաւ, որպէս զի հոն սպասող կառ-
քերուն տեղ բացուի և հասարակաց
անցուղարձը չխախտեն:

Լէվընթ Հէրըա լրագիրը կը ծա-
նուցանէ թէ Աւստրալանական Գաշ-
նակցութիւն կոչուած ընկերութեան
կողմէ պատգամաւորութիւն մը Լոն-
դոնէ Կ. Պոլս կու գայ Վեհ Սուլ-

Թանին ներկայանալու և Ն. Կ. Վե-
հախառնութեան ուշադրութիւնը
խնդրելու ինչ ինչ անխառնութեանց
վրայ, որք թուրքերից գաւառական իշ-
խանութեանց կողմէ գործուած են
եղեր բողոքականաց սմանց դէմ:

Բուսնի իրականացումն անցած
տեղերն ապահովութիւնը բարեւոք
վիճակի մէջ չէ: Չորրորդ մաս երկա-
թուղւոյ պահպանման մ'սպաննուեցաւ:
Բապաւայի և Չէրքէզ քէօյի մաս
այ ուրիշ պահպաններ ճանապար-
հորդք կողոպտուեցան:

Տէտէ Աղաճի կայարանը կոխող
և 800 լիւր կողոպտող աւազակներն
այ դեռ գտնուած չեն:

Պրուսացիները ճամախ մը կը
ծանուցանէ թէ կայսերական կառա-
վարութեան հրամանաւ վերջապէս
տեղւոյն կաթողիկէ Հայոց եկեղեցին ու
առաջնորդարանը Հասունեան կըզե-
րին ձեռքն առնուելով: Արեւելեան
կաթողիկէ Հայոց Պատրիարքին կողմէ
ըրկուած առաջնորդին յանձնուեր է:

Կառավարութեան հրամանը քա-
նի մ'ամեն 'ի վեր հասած էր 'ի Պը-
րուսա, բայց Հասունեանք՝ ամեն հը-
նարք 'ի գործ դնելով անգործադ-
րելի ըրած էին: Վերջապէս նոր և
սաստիկ հրաման մ'երթալով Բ.
Դաւէն, երեքշաբթի օրը գործադը-
րուեր է:

Հասունեան եպիսկոպոսն, որ մին-
չև ցարդ Պրուսայի առաջնորդու-
թեան վրայ բռնացեր կեցել էր, և
Կ. Պօլսէն անոր օգնութեան հասնող
չորս կամ հինգ Հասունեան վարդա-
պետք, որոց հետ է եղեր նաև Տէր-
վիլ մականուանեալ վարդապետը,
զգեստաւորեալ եկեղեցւոյն մէջ կե-
ցել են, կարծելով թէ այս հանգե-
րանց և միանգամայն հոն գումար-
եալ 30—40 վարձեալ կանանց աղա-
յակներուն շնորհիւ կրնային Բ. Դրան
հրամանն արգելու:

Ոստիկանութեան զօրաց հազա-
րապետը քանի մ'անգամ ազդարա-
րութիւն ըրեր է քաղաքավարու-
թեամբ և տղերսոնք, որպէս զի
տէրութեան հրամանին հնազանդե-
լով յանձնեն եկեղեցին. բայց լսելի
չէ եղեր. հուսկ ուրեմն հրաման ը-
րեր է զինուորաց որ զգեստաւորեալ
Գերապայժառը բռնեն դուրս հանեն
եկեղեցիէն. անոնք ալ կատարեր են:
Վարդապետներն ինչպէս նաև վար-
ձեալ կանայքն՝ աղաղակ բառնալով
արգելու ուզեր են, և մինչև իսկ
Տէրվիլ վարդապետը տէրութեան
զինուորներուն դէմ զենք փորձեր է,
բայց զիմադրութեան պատիժը կը-
րելով դուրս հանուեր է միւս պոռչ-
տողներուն հետ:

Եկեղեցին և առաջնորդարանն
այսպէս Հասունեանց ձեռքէն կոր-
զուելէ ետև Պատրիարքին կողմէ շըր-
կուած առաջնորդին յանձնուեր են.
բայց Հասունեանց կողմէ անկարգու-
թիւն մը չպատահելու համար՝ Վսեմ
կուսակալը եկեղեցւոյն շուրջը պա-
հապան զինուորներ դրեր է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԵՍԶԱՄԲ ՌԻՄՈՒՄԻԷ			
27	սեպտ. ուրբաթ	Իրիկուն	51, 4
28	»	շաբաթ առաւօտ	
		բացուեցաւ	50 25
		կէս օր	50 45
Կ. Պօլս 27 սեպտ.			
Պօլսէթէ ժէնէրայի բաժինը	Անգղ. լիւր	7	28
« փոխտնակութեան »		4	35
Կ. Պօլսայ Պանքային »		5	32
Քրէտի ժէնէրայ »		11	30
Քրէտի Օսթրո-թիւրք			
երկաթուղեաց հին	Տր.	429	
»	»		
Փոխ. 1863	»	342	
» 1865	»	348	

»	1869	»	»	275
»	1872	»	»	83 1/2
»	1873	»	»	265
Թրամուէ		Օսթ. լիւր	5	

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կը լսենք թէ Ընդհ. և Բաղաքա-
կան ժողովոց պիւտնները Ս. Պատրի-
արքին հետ խորհրդակցելով որոշե-
րն յառաջիկայ ուրբաթ օրն Ընդհ.
ժողով գումարել 'ի Պատրիարքարան:

Այս կերպով գումարացի և գեղն-
փակի խնդիրները կրդերնան մէջ տե-
ղէն:

Վանէն հեռագրով լուր կուտան
մեզ թէ Արդումանեան Ստեփան վար-
դապետը՝ որ կեդրոնական վարչու-
թեան անօրէնութեամբ յիշեալ քաղա-
քը քննիչ գնացեր է եղեր, Վանայ
առաջնորդութիւնը ձեռք բերելու աշ-
խատելով մեծ խռովութիւն հաներ
է հոն, և հիմա բողոքոյ հանրագիր-
ներ կ'ստորագրուին գաւառին ժողո-
վրդոց կողմէ:

Երեւալ վարդապետին անցեալ
տարի կուտնայի մէջ խաղցած խա-
ղերը դեռ միտքերն ըլլալով, Վա-
նայ մէջ ալ խռովութիւն հանելուն
վրայ չենք զարմանար:

Ցաւալի է որ վարչութիւնն այս-
պիսի փափուկ պաշտօններու համար
այլ և այլ գիտութիւնով առաջարկ-
եալ անձանց անցեալը չքննելով՝ օ-
րինաւոր գործ կը յուսայ առնցմէ,
և վերջն ալ բազում աշխատութիւն
կը կրէ անոնց աւերածը չինելու:

Պանտրմայի և Պալքէսէրի ա-
ռաջնորդ ընտրուած՝ բայց առանց
իր վիճակն երթալու եպիսկոպոսու-
թեան թեկնածոյ իզմիրեան Արթ.
Մատթէոս վարդապետն հրաժարա-
կան տուեր է յիշեալ առաջնորդու-
թեանէն:

Այս հրաժարման պատճառն, ինչ-
պէս որ կ'ստուգենք, կրօնական ժո-
ղովոյ մէջ որոշումն եղած է, որ կը
տրամադրէ թէ առաջնորդ ընտրե-
ւած վարդապետ մը մինչև որ իր վի-
ճակը չերթայ, ժամանակ մը հովուա-
կան պաշտօն չվարէ և իր արժանա-
ւորութիւնը փորձով և արդեամբ
ցոյց չտայ, եպիսկոպոսական աստի-
ճան ընդունելու չառաջարկուի:

Այս որոշումն որ Հայաստանեայց
եկեղեցւոյ կանոնաց համաձայն ըլ-
լալէ զատ, ուղիղ բանի և արդարու-
թեան ալ համաձայն է, Արթ. իզմիր-
եանի գործին չէ եկած: Նորին ար-
ժանապատուութիւնը կուզէր՝ որ
Սահմ. Չըդդ. յօդուածին* պէս եկե-
ղեցւոյ կանոնն ալ փոխուէր իրեն հա-
մար: Բայց կրօնական ժողովը Հա-
մարձակեցաւ այս զիջումն ընել:

Արթ. իզմիրեան՝ նախորդ տը-
գիտագումար կրօնական Ս. ժողովին
վկայագիր մ'ստորագրել տուած էր՝
Պանտրմայի ժողովրդեան կողմէ ներ-
կայացեալ կամ մանաւանդ երեա-
կայեալ անդոյ խնդրագրի մը վրայ
հիմնելով, որ սուտ վկայութենէ ա-
ւելի արժէք չէր կրնար ունենալ. ու-
րովհետեւ Պանտրմայի ժողովուրդը
զինքն չէր ճանչեր, իր երեսը տեսած
չէր, իր հովուական խնամքը վայելած
չէր, արժանիքը գնահատած չէր:

* Սահմ. 24րդ յօդուածը կը պահան-
ջէր որ կրօնական ժողովոյ անդամ ընտ-
րուող վարդապետ մ'երսուէն տարին լրա-
ցուցած ըլլալէ զատ՝ գէթ հինգ տարիէ ի
վեր ձեռնադրուած ըլլայ՝ և սրովհետեւ
Արթ. իզմիրեան առանց հինգ տարիէ 'ի
վեր ձեռնադրուած ըլլալու կրօնական
ժողովոյ անդամ ընտրել կուզուէր: Սահմ.
այս յօդուածը չափաւորել առաջարկուե-
ցաւ Ընդհ. ժողովոյ, և չափաւորեցաւ:

Յետոյ երբոր ներկայ կրօնական ժո-
ղովոյ այդ խնդրագիրը տեսնել ու-
զեր և չէ գտեր, վասն զի չկար, ան-
միջապէս Պանտրմա դուրսելով խընդ-
րագիր մ'ստորագրել տուեր ու Կ.
Պօլս բերուեր է, կրօնական ժողովոյ
ալ կարեւորութիւն չտալով վերոյիշ-
եալ կանոնական որոշումն ըրեր է:

Հիմա կը լսենք թէ Արթ. իզմիր-
եանի վեհ. կաթողիկոսին գրելով՝ հրա-
ման բերել պիտի տայ եղեր, որպէս
զի Արթ. իզմիրեան Ս. Էջմիածին եր-
թայ և եպիսկոպոսական աստիճան
ստանայ՝ առանց առաջնորդական
պաշտօն վարած և ժողովրդեան հով-
ւութիւն ըրած ըլլալու:

Ձեռներէջ խմբակը կրնայ համարձա-
կիլ այդպիսի բան մ'ընելու, բայց Վեհ.
կաթողիկոսն ալ կը գիշանի՝ 'ի շնորհս
այդ խմբակին՝ կրօն. ժողովոյ որոշումն,
որ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց
և աւանդութեանց վրայ հիմնուել է,
աւերել, ապօրինութիւնը քաջալերել
և նորանոր զեղծմանց դուռ բանալ:
—մեզ անյուսալի կըթուի, մանաւանդ
ներկայ Ս. Պատրիարքին և կրօնա-
կան ժողովին օրով, որք Վեհ. կա-
թողիկոսին համակրութիւնն ու վրա-
տահութիւնը կը կրեն:

ՀԱՍՏԱՐԱԿԱՅ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԽՆԴԻՐ

Եթէ կայ մեր աղգին համար ա-
մենակարեւոր և կենսական խնդիր մը,
մահու և կենաց խնդիր մը, հասա-
րակաց կրթութեան խնդիրն է այն:
Այս ճամբարութիւնը չճանչող քիչ
մարդ կը գտնուի այսօրուան օրս մեր
աղգին մէջ:

Ամեն մասցի և խոհուն մարդիկ
համոզուած են, որ մեր աղգին թէ՛
նիւթապէս և թէ՛ բարոյապէս անկ-
ման պատճառն իւր մէջ տիրող տը-
գիտութիւնը կամ կրթութեան պա-
կասութիւնն է: Որչափ թշուառու-
թիւնը նիւթապէս, որչափ թշուա-
ռութիւնը բարոյապէս՝ այդ չարա-
շուք ագիտութեան արգելքն են:
Եթէ ամեն մարդ իւր պարտքն ու ի-
րաւունքը ճանչէր, եթէ ամեն ոք
քիչ շատ մտաւորական լոյս, ճանա-
չում, ընտրութիւն և դատողութիւն
ունենար, նիւթական յառաջդիմու-
թենէ զատ՝ բարոյապէս ալ որչափ
զեղծմունք, որչափ անիրաւութիւնք,
որչափ խաբէութիւնք պիտի կը-
լային աղգին մէջ: Մինչդեռ հիմա,
ժողովրդեան տգիտութիւնը դառ մը
մարդոց շահուն դրամագլուխ ըլլալով,
աղգային գործերն ալ ներկայ տխուր
վիճակին մէջ ինկած են:

Ամենէն ցաւալին այս է, որ այդ
դաս մը մարդիկն աղգային կրթու-
թեան մեծ և նուիրական խնդիրն
ալ իրենց տեսակ մը մեղմամբ ընե-
լով, և ճիշդվիթական մեքենայու-
թեամբ աղգին վարժարանաց մեծ
մասն իրենց աղգեցութեան ներքե
առնելով, Եթէ դուք թշուառու-
թեան ապաստանէն քաղուած միջ-
նադարեան սղորմելի դրութեան են-
թարկել կուզեն իսպառ աղգային
դպրոցները, և դժբաղդաբար յա-
ջողելու վրայ են՝ ժողովրդեան ամե-
նամեծ մտահանգը անհրաժեշտութիւնն ի-
րենց նեցուկ գտնելով:

Այս անկերպարան, սղարգիւն և
մարդ վիճակին մէջ ամեն խելահաս
աղգայնոց պարտքն ժողովուրդին ար-
թընցնել իր զաւակաց ապագային
փճացնող ներկայ փուլն է դրութեան
փնտաղարկութիւնը ցոյցներ և եւրո-
պիոյ լուսաւորեալ աղգայն իսկ նա-
խաձեռել և հետեւողութեան օրինակ
եղողվիթական դրութեան վրայ ծը-
նօթալ իւրենց արար, նոր և ար-

դիւնաւոր ճանքու մը մէջ մտնելու
պէտքն աղգայնի:

Այս խորհրդով արժան և պարտք
կը համարինք ամեն ուսումնասիր և
լրջախոհ աղգայնոց ուշադրութեան
ներկայացնել իզմիրե Արեւելեան Մա-
մուլ ամսատետրին մէջ հրատարակ-
ւած հետեւեալ ընտիր յօդուածն՝ որ
Գերմանիոյ հասարակաց կրթութեան
վիճակին նկարագրերն է:

ՀԱՍՏԱՐԱԿԱՅ ԿՐԹՈՒԹԻՒՆ Ի ԳԵՐՄԱՆԻԱ

Ֆրանքօ—Գերմանական պատերազ-
մն ետք՝ աշխարհ իր աչքը դարձուց դէպ
'ի Գերմանիոյ, և անոր վիճակը հիանալի
յաջողութեան պատճառներուն մէջ տե-
սու խոշորութիւն մը որ ոչ միայն Եւրոպա-
յի ժողովրդոց՝ այլ և վեհապետաց խորին
ուշադրութիւնը գրաւեց: Այս իրողու-
թիւնն էր գերմանական կրթութեան գե-
րազանցութիւնը: Մինչև այն ատեն Ֆը-
րանսա՝ քաղաքակրթութեան կատարը կե-
ցած՝ մարդկային աղգին դաստիարակչ
օրէնտըլը, ազատարար կը հռչակուէր.
և գիտութեան իմաստասիրութեան, զը-
րականութեան և կրթութեան խնդիր-
ներու վրայ սրտագմաներ կարծակէր:
«Բարից աշխարհի մայրաքաղաքն էր» և ո՛վ
որ անոր լուսնն գործի, ո՛վ որ անոր ող-
այն և բարուց անհաղորդ մտոր կիսկատար՝
վիճեալ՝ մարդ մը կրնայուէր, այս մարդն
այլուր թէ գիտութեան և թէ արհեստից
որ և է հիւզին մէջ անուն մը ստացած
ինչ որ անգամ: Բայց ինչպէս քաղաքա-
կան՝ նոյնպէս կրթութեան դրութիւնն
ինչ մեծ փոփոխութիւն կրեց այն ահա-
ւոր պատերազմին 'ի վեր: Գերմանիոյն ե-
րևան հանց որ Գերմանիա՝ ոչ միայն իր
յաղթանակները Վափոյնեան ջորա-
պետաց ապիկարութեան և մատուցեալ
պարտաւոր էր, այլ մանաւանդ տեւի
Հաստատուն, աւելի հիմնական բանի մը
այն է հայրենասիրութեան մը որու պէ՛
յարտաւերութիւն աղգայն էին աղգային
կրթութիւնն ու գիտութիւնը:

Մենք Հայքս ալ Ֆրանսայի աչքով կը
դատէինք Գերմանիան, և զայն իրեւ կէս
բարբարոս, Տակիտոսի նկարագրած գոյ-
ներով կը փոխէինք՝ առանց անոր բարո-
յական և մտաւոր կենաց պայմաններուն
հետամուտ լինելու անպաշար և հասուն
քննութեամբ: Սակայն այժմ նոյն իսկ
Ֆրանսա՝ իր ծանր աղէտից ներդրու-
թենէն անտիկելով կը նայի որ, թէ՛ և ինք
իր ընկերական համակիր բնաւորութեամբ,
իր տեսական սկզբունքով, իր դուրսա-
զօրք բարութ, իր ճարտարութեան եւ
նորաձեւութեան կողմէ, և մանաւանդ իր
քանիչելի պայծառ լեզուով բարձրագոյն
պիտի տիրապետէ միւտ ժողովրդոց վրայ
և իրմով անոնց հպելի ոյլու դարձնէ օ-
տարին գիւտերն անգամ, բայց դարձեալ
կրթութեան կազմակերպութեան մասին
Գերմանիան իրմէ շատ առաջ դայած է:
Այս ճամբարութիւնը հին էր, աղգարար
ձոյներ նոյն կը քարոզէին իրեն: Բայց
Ֆրանսա յանձնադաստան էր, իր բաւա-
կանութեամբ մարդած էր, և աւախի
նոր կը տեսնէ, ահաւելի փորձով կը տես-
նէ այս ճամբարութիւնը: Որչափ որ դառն
է խտտով լինել թշուառ մը արեւմտեան
թիւնը, և Ֆրանսա արեւութիւն ունի ոչ մի-
այն խտտով լինել գերմանական կրթու-
թեան գերազանցութիւնն, այլ և անոր
դրութիւնը փոքր առ փոքր իր մէջ մու-
ծանելու: Կէ այս ճանաչումն յառաջա-
դիմութեան առաջին քայլն է: Արդարեւ
Ֆրանսա՝ իր քաղաքական անկայուն վի-
ճակին մէջ՝ կրթութեան մեծ խնդրով
կ'զբաղի քանի մը տարիէ 'ի վեր: Իր ման-
կավարժական և ուսուցման եղանակնե-
րը հինն 'ի վեր տապալելու պէտքը կ'զգայ
և կըրկին կողմէ, ինչպէս յայտնի է մեծ
ընդդիմութիւն կ'տեսնէ: Վերանորոգու-
թեան այս գործին օգնելու համար ան-
ուանի մարդիկ անդադար կը քննեն գե-
րմանական կրթութեան դրութիւնն, եւ
դատարարական վրայ հետզհետէ նոր
նոր գործեր կը հրատարակեն:

Եթէ Ֆրանսա այսպէս, որչափ ևս ա-
ռաւել մեր թշուառ աղգը պէտք ունի փո-
փոխելու իր դպրոցական փուլն գրու-
թիւնն և նոր կենսաստեղծման մը մէջ
մտնելու: Արդէն քանի մ'աղգային դրա-

4. ԳՕԼԻՄ ԶԻՆԻԼԻ ԻՍՏ

Կը գտնուի Բէրա և Կ. Պօլիս Վանլիւք և Կըբարցի,
վէրիցի և Գաւազեանի գեղարանները:

սպեանի դեղարանները:

Այս հանքային ջուրն Եւրոպայի մէջ:

ROGÉ

Tout facon ne portant pas ce cachet imprimé en quatre couleurs devra être considérée comme ne sortant pas de la fabrique de l'inventeur.

PARIS

Երևութեանց համար արեւոյ է դիմել Մի-
թիւոյ Բելլէմսի բաղարի մօտ Կլաւմանի

Վ. Ռ. ՍՈՒՍՆ ԱՏՐԻԱՆ Մ. ԳԻԻՆ